Աշխատանքի ծածկագիր 3816

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 20.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Ա. Աթանեսյանի
մասնակցությամբ անդամներ՝ Ա.Դունամալյանի
Պ. Թադևոսյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քաղաքացիական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Տ

Բողոքարկվել են քաղաքացիական դատավարություն բաժնի 2-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ, 18-րդ, 20-րդ, 23-րդ, 25-րդ, 28-րդ, 29-րդ և քաղաքացիական իրավունքի բաժնի 19-րդ, 50-րդ հարցերը:

Քաղաքացիական դատավարություն բաժին

Հարց 2

Հավակնորդը նշված հարցի վերաբերյալ բողոքում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Հարց 9

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնաբացարկի կամ բացարկի հարցը լուծում է դատավորը: Եթե գործը քննվում է դատավորների կոլեգիալ կազմով, և բացարկ է հայտնվել դատավորներից մեկին կամ մեկից ավելի դատավորների կամ դատական ամբողջ կազմին, ապա յուրաքանչյուր դատավոր լուծում է իրեն հայտնված բացարկի հարցը: Վերոգրյալ կարգավորումից բխում է, որ ինքնաբացարկի կամ բացարկի հարցերը լուծվում են առանց քվեարկության, հետևաբար Հավակնորդի կողմից ընտրված «գ» տարբերակը որևէ դեպքում չի կարող ճիշտ համարվել:

Հարց 10

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 11-րդ մասը հստակ նշում է, որ հատուկ կարծիքը հրապարակվում է դատական ակտի հետ մեկտեղ, իսկ Հավակնորդի

Created With Tiny Scanner

ընտրած տարբերակում նշված է, որ հրապարակվում է միայն այն դեպքում, երբ հատուկ կարծիքը վերաբերում է դատական ակտի եզրափակիչ մասին, ինչն ուղղակիորեն հակասում է վերոգրյալ իրավակարգավորմանը:

Հարց 11

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ բերված այն հիմնավորումը, որ եթե կա հակասություն, ապա ենթադրվում է, որ օտարերկրյա իրավունքի նորմերում բացակայում է որևէ նորմ, որը լիարժեքորեն ամրագրված է ՀՀ իրավունքում, բացարձակ անհիմն է:

Հարց 13

Հավակնորդը նշված հարցի վերաբերյալ բողոքի առաջին մասում կարողացել է հիմնավորել նաև իր ընտրած տարբերակի սխալ չլինելը, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Հարց 15

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը չի վերաբերում երկրորդ անգամ նույն հիմքով բացարկ ներկայացնելուն, այլ՝ բացարկ ներկայացնելու ընդհանուր կարգին, որի դեպքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 4-րդ մասով ապացույցներ ներկայացնելը պարտադիր չէ:

Հարց 17

Հավակնորդի փաստարկներն ամբողջությամբ հակասում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներին, մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 6-րդ մասին, որը վերաբերում է անչափահաս վկայի հարցաքննության կարգին:

Հարց 18

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 3-րդ մասը սպառիչ թվարկում է այն անձանց շրջանակը, ովքեր որպես վկա ցուցմունք տալուց որոշակի հարցերին չպատասխանելու իրավունք ունեն, իսկ ինչ վերաբերում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքում տրված «ընտանիքի անդամ» եզրույթին, ապա այն կիրառելի է միայն այդ օրենքի շրջանակներում:

Հարց 20

Նշված հարցի վերաբերյալ բողոքը հիմնավոր չէ, քանի որ ընտրված տարբերակում առկա է նաև քրեական գործով դատարանի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստերի նախադատելիության մասին նշում /որևէ սահմանափակում նշված չէ/, իսկ քրեական գործերի դեպքում առկա է սահմանափակում՝ նախադատելի կարող է լինել միայն որոշակի արարքի և դրանց կատարած անձանց վերաբերյալ փաստերը:

Created With Tiny Scanner

Հարց 22

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 3-րդ մասով և հավակնորդի կողմից ընտրվել է ակնհայտ սխալ պատասխան:

Հարց 23

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 65-րդ հոդվածի 5-րդ մասով, որը նշում է պարունակում գործին մասնակցող անձանց հարցաքննելու վերաբերյալ:

Հարց 25

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածի 3-րդ մասով, որտեղ նշված է, որ իրեղեն ապացույցները վերադարձնելը չպետք է խոչընդոտի ապացույցների հետագա հետազոտումը:

Հարց 28

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 89-րդ հոդվածով, որտեղ նշված է, որ գործին մասնակցող անձը գրավոր առարկությունը պարտավոր է առաջին ատյանի դատարան ներկայացնել մինչև նախնական դատական նիստի ավարտը, ինչ վերաբերում է Հավակնորդի այն փաստարկներին, որ ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ որոշման կայացման պահը և նախնական դատական նիստի ավարտը համընկնում են, ապա դրանք ամբողջությամբ հակասում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի կարգավորումներին:

Հարց 29

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ հարցը հստակ կարգավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասով և հավակնորդի կողմից ընտրվել է ակնհայտ սխալ պատասխան:

Քաղաքացիական իրավունքի բաժին

Հարց 19

Հավակնորդի փաստարկները հիմնավոր չեն, քանի որ նշված հարցը կարգավորվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն որի հայցի նախնական ապահովման միջոցներ կիրառելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս դիմողն ազատված է

Created With Tiny Scanner

պետական տուրքի, ինչպես նաև հնարավոր վնասների հատուցումն ապահովող գումարը դատարանի դեպոզիտ վճարելու պարտականությունից:

Հարց 50

Հավակնորդի կողմից ընտրվել է ճիշտ պատասխան, որը գնահատվել է զրո, հետևաբար գնահատականն ենթակա է բարձրացման:

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 3816 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի: Քաղաքացիական դատավարության բաժնից ստացված 16 միավորը բարձրացնել երկու միավորով՝ արդյունքում արձանագրել 18 միավոր և քաղաքացիական իրավունքի բաժնից ստացված 34 միավորը բարձրացնել մեկ միավորով՝ արդյունքում արձանագրել 35 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Ա.ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ

Պ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Created With Tiny Scanner